



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻԱԿՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
 ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՅ
 ՏԻԱՐ ԱՐԱ ԱՔՐԱՀԱՄԵԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Չորեքշաբթի, 2 Մայիսի կեսօրին, Ազգային Առաջնորդարանի նորակառոյց շէնքի պաշտօնական դահլիճին մէջ ընդունեց այցելութիւնը Ռուսաստանի Հայերու Միութեան եւ Համաշխարհային Հայկական Զոնկրէսի Նախագահ եւ Իւնտըրնի Բարի Կամքի Դեսպան տիտղոսին արժանացած՝ Տիար Արա Աբրահամեանի:

Պարոն Աբրահամեանին կ'ընկերանային Ռուսաստանի Հայերու Միութեան Փոխ Նախագահ Տիար Աբէթ Թափալցեան եւ Թեմիս ազգայիններէն Տիար Արթիւր Արդէնեան: Առաջնորդ Սրբազան Հօր կողքին, հանդիպումին ներկայ եղան նաեւ Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներ՝ Գերպ. Ս. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգ. Ս. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, Ազգային Վարչութեան փոխ ատենապետ Տոքթ. Յակոբ Տէր Մկրտիչեան, անդամներ՝ Տոքթ. Նաւասարդ Գազազեան եւ Տիար Կարպիս Պէզճեան:

Փոխադարձ ծանօթացումէ ետք, հայրենի հիւրը մօտէն հետաքրքրուեցաւ մեր Թեմի եկեղեցական ու կրթական առաքելութեան մասին: Առաջնորդ Սրբազանը Տիար Արա Աբրահամեանին հակիրճ բայց ամբողջական տեղեկութիւններ փոխանցեց մեր Թեմի պատմութեան, եկեղեցիներուն, Ազգային Վարժարաններու ցանցին եւ քրիստոնէական դաստիարակչութեան բազմաճիւղ ու հետզհետէ ծաւալող գործունէութեանց մասին: Իսկ Տիար Արա Աբրահամեան, իր կարգին, ծանօթութիւններ փոխանցեց իր անմիջական ու հետագայ ծրագիրներուն մասին, որոնք հետզհետէ մարմին պիտի առնեն Միացեալ Նահանգներու մէջ: Ան շեշտեց անհրաժեշտութիւնը Հայկական կազմակերպութեանց միասնական եւ անվերապահ գործակցութեան եւ հզօրացման: Ան կարեւորութեամբ անդրադարձաւ նաեւ հայ ժողովուրդի գործառնութեան զարգացման հարցին՝ Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:



Առաջնորդ Սրբազանը անգամ մը եւս շնորհաւորանք ու բարեմաղթութիւն փոխանցեց Տիար Աբրահամեանին, անոր գալիք բոլոր ծրագիրներուն եւ գործառնութեանց մէջ:

Աւելի քան ժամ մը տեւած հանդիպումը անցաւ մտերմիկ մթնոլորտի մէջ, բոլոր ներկաներուն մասնակցութեամբ: Աւարտին՝ Առաջնորդ Սրբազանն ու Տիար Աբրահամեանը փոխանակեցին յուշանուէրներ:

Հանդիպումը առիթ եղաւ նաեւ այցելելու եւ ծանօթանալու Առաջնորդարանի նորակառոյց շէնքին եւ մատրան:

PRESS RELEASE

PRELATE WELCOMED PRESIDENT OF THE UNION OF ARMENIANS OF RUSSIA MR. ARA ABRAHAMYAN

On the afternoon of Wednesday, May 2nd, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed the President of the Union of Armenians of Russia and the World Armenian Congress and UNESCO Goodwill Ambassador Mr. Ara Abrahamyan to the new Prelacy headquarters.

Mr. Abrahamyan was accompanied by Union of Armenians of Russia Vice-President Mr. Apet Tapaltsyan and Prelacy friend Mr. Artur Artenyan. Alongside the Prelate were Christian Education Department Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, Executive Council Vice-Chair Dr. Hagop Der Megerdichian, and Executive Council members Dr. Navasart Kazazian and Mr. Garbis Bezdjian.

During the meeting the Prelate briefed Mr. Abrahamyan about the history of the Prelacy, its parishes, and schools. In turn, Mr. Abrahamyan conveyed to the Prelate details about his current endeavors and future plans and stressed the importance of collaboration between different Armenian organizations.

At the conclusion of the meeting the Prelate and Mr. Abrahamyan wished each other success in their respective upcoming endeavors and exchanged mementos.



This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to info@westernprelacy.org. Visit our Website www.westernprelacy.org Copyright . 2007 All rights reserved.